

4.2.2. Ներքին զբոսաշրջություն

Ըստ ստացված հաշվետվությունների տվյալների, 2015թ. հունվար-դեկտեմբերին հանրապետության տարածքում հյուրանոցային տնտեսության օբյեկտներում տեղաբաշխված զբոսաշրջիկների թվաքանակը կազմել է 871 888 մարդ (ՀՀ ռեզիդենտներ)¹, ինչը 2014թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ աճել է 1.4%-ով:

Ներքին զբոսաշրջությունն ըստ նպատակի

	2014թ. հունվար- դեկտեմբեր	Տեսակարար կշիռը (2014թ. հունվար- դեկտեմբեր, %)	2015թ. հունվար- դեկտեմբեր	Տեսակարար կշիռը (2015թ. հունվար- դեկտեմբեր, %)	Աճի տեմպը, %
Ընդամենը զբոսաշրջիկներ²	859 703	100.0	871 888	100.0	101.4
որոնցից ըստ նպատակի՝					
գործնական	189 465	22.0	160 089	18.4	84.5
հանգստի և ժամանցի	540 375	62.9	591 271	67.8	109.4
բուժման	84 133	9.8	63 494	7.3	75.5
այլ	45 729	5.3	57 034	6.5	124.7

¹Ըստ ՄԱԿ-ի զբոսաշրջության համաշխարհային կազմակերպության (ՁՀԿ) մեթոդաբանության (International Recommendations for Tourism Statistics 2008, Compilation Guide, UN WTO, Madrid, November 2010) **ներքին զբոսաշրջիկ** է համարվում ցանկացած անձը, որը ճանապարհորդում է իր հիմնական բնակության վայրի երկրի սահմաններում (սովորական բնակության միջավայրից դուրս), այսինքն որևէ երկրի բնակիչների ճանապարհորդությունը իրենց իսկ երկրում կամ հիմնական բնակության երկրում, անկախ ճանապարհորդության նպատակից (բացի ուսման նպատակով) ոչ պակաս քան 24 ժամ և ոչ ավել քան անընդմեջ 1 տարի ժամանակով և ճանապարհորդության գլխավոր նպատակը չի հանդիսանում գործունեությամբ զբաղվելը, որի համար վճարվում է այցելած վայրում:

²Բերված տվյալներն արտացոլում են հյուրանոցային տնտեսության օբյեկտներում (հյուրանոցներ, հյուրանոցատիպ հանգրվաններ, առողջարաններ, հանգստյան տներ և այլն) հաշվառված զբոսաշրջիկներին: